

Գրանցված է Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում

«02ե դեկտեմբերի 2008թ.

Նոր խմբագրությամբ գրանցված է  
30.04.2010թ.

Փոփոխությունները եվ լրացումները գրանցվեն են 13.10.2011թ.

Նոր խմբագրությամբ գրանցված է  
27.08.2012թ.

Նախագահ Արթուր Զավադյան

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ  
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

## 1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգը սահմանում է արժեթղթերի հաշվարկային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) անդամության և անդամությունից զրկման, Համակարգի օպերատորի կողմից արժեթղթերով գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ճշտման, դրանց արդյունքում փոխադարձ պարտավորությունների որոշման և հաշվանցման, արժեթղթերը հաշիվներում փոխանցման, վերջնահաշվարկի կատարման, վճարման ու վերջնահաշվարկի հարցերում կողմերի միջև որպես գործակալ հանդես գալու կարգերը, ինչպես նաև Համակարգի անդամի և նրանց հաճախորդների արժեթղթերի ու դրամական միջոցների առանձնացված պահպանմանն ուղղված միջոցառումները և Համակարգի օպերատորի փոխհարաբերությունները ՀՀ կենտրոնական բանկի, Հաշվարկային գործակալի, Բորսայի և Անդամների հետ:

1.1 Սույն կանոնակարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1.1.1. **«արժեթղթերի հաշվարկային համակարգ կամ Համակարգ».** արժեթղթերի հաշվարկային համակարգը սույն կանոնակարգով սահմանված կարգով արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող վարչական, տեխնիկական և իրավական միջոցների ամբողջությունն է.

1.1.2. **«անձնական հաշիվ».** գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), նրան պատկանող (նրա անվամբ գրանցված) արժեթղթերի և դրանցով կատարված գործառնությունների մասին ռեեստրում առկա տեղեկությունների ամբողջությունը.

1.1.3. **«առևտրային արգելադրում».** Օպերատորի կողմից իրականացվող գործառնություն. որի արդյունքում Բորսայում առևտուր իրականացնելու համար նախատեսված արժեթղթերի փոխանցումն արգելվում է որոշակի ժամանակահատվածում կամ մինչև այդ արժեթղթերով Բորսայում կնքված առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարումը, որը հանգեցնում է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը.

1.1.4. **«առևտրային արգելադրման դադարեցում».** Օպերատորի կողմից իրականացվող գործառնություն. որի արդյունքում Բորսայում առևտուր իրականացնելու համար նախատեսված և արգելադրված արժեթղթերը հանվում են արգելադրումից՝ առանց այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կամ Բորսայում կնքված առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարման հետևանքով այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման.

1.1.5. **«առևտրային օր».** աշխատանքային օր, որի ընթացքում Բորսայում իրականացվում է արժեթղթերի առևտուր.

1.1.6. **«առևտրային նստաշրջան»** առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում է արժեթղթերի բորսայական առևտուր.

1.1.7. **«տեխնիկական հաշիվ».** Օպերատորի մոտ իր անունով բացված հաշիվ, որը նախատեսված է Համակարգի տվյալ անդամի և/կամ նրա հաճախորդի (Անդամի՝ որպես անվանատիրոջ) արժեթղթերով տվյալ առևտրային օրվա առևտրային

նստաշրջանում կնքված գործարքների արդյունքում գործարքի առարկա արժեթղթերի փոխանցման համար.

- 1.1.8. **«դրամի առևտրային հաշիվ».** ՀՀ կենտրոնական բանկում Օպերատորի անունով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա ընթացքում Համակարգի անդամի (նրա՝ որպես անվանատիրոջ) և/կամ նրա հաճախորդի այն դրամական միջոցների փոխանցման համար, որոնցով Համակարգի անդամի կողմից նախատեսվում է տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնել.
- 1.1.9. **«սեփական դրամական միջոցների հաշիվ».** Հաշվարկային գործակալի մոտ Համակարգի անդամի անունով բացված դրամային և/կամ արտարժույթային հաշիվ, որտեղ հաշվառվում են Անդամի սեփական դրամական միջոցները.
- 1.1.10. **«հաճախորդի դրամական միջոցների հաշիվ».** Հաշվարկային գործակալի մոտ Անդամի անունով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են Անդամի հաճախորդների (Անդամի՝ որպես անվանատիրոջ) դրամական միջոցները.
- 1.1.11. **«արժեթուղթ».** այն արժեթղթերը, որոնց սեփականատերերի ռեեստրը վարվում է Օպերատորի կողմից և որոնք Բորսայի կանոններով սահմանված կարգով թույլատրված են առևտրի.
- 1.1.12. **«Բորսա».** «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերություն.
- 1.1.13. **«Համակարգի օպերատոր կամ Օպերատոր» -** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն.
- 1.1.14. **«Անդամ».** Համակարգի անդամ
- 1.1.15. **«գործարքի կնքում».** առևտրային նստաշրջանի ընթացքում Անդամների միջև Բորսայի կանոններով սահմանված կարգով արժեթղթերի առուվաճառքի էական պայմանների վերաբերյալ համաձայնության կայացում.
- 1.1.16. **«նախնական դեպոզիտային առևտուր».** Բորսայում իրականացվող առևտուր, որի համար նախատեսված դրամական միջոցները փոխանցվում են դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին, իսկ արժեթղթերը ենթարկվում են առևտրային արգելադրման, որից հետո Բորսայում կնքված գործարքների առնչությամբ Օպերատորի և Անդամների բոլոր գործողություններն ավարտվում են տվյալ առևտրային օրվա ընթացքում և գրանցվում անձնական հաշիվներում.
- 1.1.17. **«ռեեստրից քաղվածք».** Օպերատորի կողմից տրվող փաստաթուղթ, որը հավաստում է, որ դրանում նշված անձը թողարկողի որոշակի դասի և որոշակի քանակությամբ արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր) է՝ որոշակի ամսաթվի դրությամբ.
- 1.1.18. **«հաճախորդ».** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը արժեթղթերով գործարքների կատարման ներդրումային ծառայության գործող պայմանագիր ունի Անդամի հետ:
- 1.1.19. **«Հաշվարկային գործակալ».** ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանկային գործունեության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որի միջոցով իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկում դրամային և/կամ արտարժույթային իրավասու հաշիվներ չունեցող Անդամների՝ Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների հետ կապված դրամական միջոցների փոխանցումները՝ Անդամի և Հաշվարկային գործակալի միջև կնքված պայմանագրերին համապատասխան.
- 1.1.20. **«քլիրինգ».** Բորսայում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ճշտում և հաշվարկային փաստաթղթերի պատրաստում).
- 1.1.21. **«իրավասու հաշիվներ».** Անդամներին պատկանող դրամական հաշիվներ, որոնցից միայն կարող է իրականացվել դրամական միջոցների փոխանցումը դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին, և որոնց վրա փոխանցվում են

- դրամական միջոցները Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկի իրականացման ժամանակ. Անդամը առևտրային բանկ լինելու դեպքում իրավասու հաշիվները վարվում են Անդամի կողմից, Անդամը առևտրային բանկ չլինելու դեպքում իրավասու հաշիվները վարվում է Հաշվարկային գործակալի կողմից
- 1.1.22. **«Կենտրոնացված քլիրինգ».** քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում Օպերատորը դառնում է Անդամների կողմից կնքված գործարքների հակադարձ կողմը՝ կրելով նրանց բոլոր պարտականությունները և ձեռք բերելով նրանց բոլոր իրավունքները՝ կապված Բորսայում կնքված գործարքների հետ,
- 1.1.23. **«զուտացում».** միևնույն առևտրային նստաշրջանում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված Անդամի և նրա հաճախորդների զուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում յուրաքանչյուր Անդամի (նրա, որպես անվանատիրոջ) և/կամ նրա հաճախորդի մոտ Օպերատորի հանդեպ առաջանում է միայն՝
- 1.1.23.1. մեկ զուտ դրամական պահանջ և/կամ զուտ դրամական պարտավորություն.
- 1.1.23.2. յուրաքանչյուր արժեթղթի մասով մեկ զուտ արժեթղթային պահանջ և/կամ զուտ արժեթղթային պարտավորություն.
- 1.1.24. **«վերջնահաշվարկ».** գործողություն, որի արդյունքում մարվում են դրամական միջոցների և արժեթղթերի փոխանցման հետ կապված Անդամների (նրանց, որպես անվանատերերի) և/կամ նրանց հաճախորդներին Օպերատորի միջև ծագած դրամական և արժեթղթային պարտավորությունները.
- 1.1.25. **«ամբողջական ապահովվածությամբ վերջնահաշվարկ».** վերջնահաշվարկի իրականացման եղանակ, որի դեպքում Անդամները իրավունք ունեն Բորսայում գործարքներ կնքել միայն արժեթղթերի և դրամական միջոցների այնպիսի քանակության սահմաններում, որոնք նրանց կողմից նախապես (մինչև Բորսայի տվյալ առևտրային նստաշրջանի սկիզբը) հաշվեգրվել են համապատասխանաբար դրամի առևտրային հաշվին և/կամ արգելադրված են համապատասխան անձնական հաշիվներում.
- 1.1.26. **«Էլեկտրոնային եղանակով առաքված փաստաթուղթ».** ՍիԲիԷլՆեթ միջբանկային համակարգչային ցանցի հիման վրա գործող Լոտուս համակարգի Էլեկտրոնային փոստով (այսուհետ՝ ՍիԲիԷլՆեթ համակարգչային ցանցով) կամ ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ Էլեկտրոնային վճարումների համակարգով) առաքված փաստաթուղթ: ՍիԲիԷլՆեթ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթուղթը պետք է պարտադիր օժտված լինի փաստաթղթի առաքումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի Էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով: Այն վավեր է և հավասարազոր է թղթային փաստաթղթին, եթե այն օժտված է ուղարկող կողմի Էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկվել է ստացող կողմի՝ ՍիԲիԷլՆեթ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված համապատասխան հասցեով (այսուհետ՝ իրավասու Էլեկտրոնային հասցե) :
- 1.1.27. **արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ** » «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորը և օրենքով նախատեսված այլ անձինք.
- 1.1.28. **ներդրումային ծառայություններ մատուցող անձ** » ներդրումային ընկերություն, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, բանկը և վարկային կազմակերպությունը.
- 1.1.29. **անվանատեր»** անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը.

- 1.1.30. **Անդամի բորսայական հապավում»** 5 նիշ, որը շնորհվում է Բորսայի կողմից.
- 1.1.31. **առևտրային ծածկագրի նախադիր»** 2 նիշ, որը շնորհվում է Օպերատորի կողմից.
- 1.1.32. **Բորսայի՝ արժեթղթերի տեղաբաշխման համակարգ»** էլեկտրոնային եղանակով բորսայական առևտրի կազմակերպման համար Բորսայում օգտագործվող առևտրային համակարգի և դրա մաս կազմող և արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման համար օգտագործվող ծրագրային մոդուլի ամբողջություն, որը նախատեսված է Բորսայում արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններե-ով սահմանված այլ գործառույթների իրականացման համար:
- 1.1.33. **դրամական միջոցներ»**. Բորսայում կազմակերպվող կորպորատիվ արժեթղթերի առևտրի նպատակով՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով օգտագործվող ՀՀ դրամ և/կամ արտարժույթ.
- 1.1.34. **արտարժույթի առևտրային հաշիվ»** ՀՀ կենտրոնական բանկում՝ Օպերատորի անունով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա ընթացքում Համակարգի անդամի (նրա՝ որպես անվանատիրոջ) և/կամ նրա հաճախորդի այն արտարժույթային միջոցների փոխանցման համար, որոնցով Համակարգի անդամի կողմից նախատեսվում է տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնել:
- 1.2. Սույն կանոնակարգում կիրառվող այլ հասկացությունները ունեն Օրենքով և Օպերատորի այլ կանոններով սահմանված նշանակությունները:

## 2. Անդամության կարգը և անդամությունից զրկումը

- 2.1. Համակարգի անդամ (այսուհետ նաև՝ Անդամ) կարող են լինել.
- 2.1.1. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները
- 2.1.2. ՀՀ կենտրոնական բանկը
- 2.1.3. օտարերկրյա հաշվարկային համակարգի օպերատորը, օտարերկրյա արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով
- 2.1.4. ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ անձինք
- 2.2. Համակարգի անդամ դառնալու և Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելու և գործարքներ կնքելու համար սույն կանոնակարգի 2.1. կետով սահմանված անձինք պարտավոր են Օպերատորի հետ կնքել Համակարգի սպասարկման համապատասխան պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), ներկայացնելով համապատասխան գրանցման դիմում , դրան կից Ձև R101-ը՝ (տես Հավելված 1) երկու օրինակից և համակարգի անդամի կարգավիճակի շնորհման համար Օպերատորի «Սակագների մասին կանոններով» նախատեսված վճարումը հաստատող փաստաթղթի պատճենը:
- 2.3. Սույն կանոնակարգի 2.2. կետով սահմանված փաստաթղթերը Օպերատորին է ներկայացվում Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելուց և գործարքներ կնքելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:
- 2.4. Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է գրանցման դիմումի ներկայացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում կնքել Պայմանագիր կամ մերժել ներկայացված դիմումը, այդ մասին գրավոր ծանուցելով համապատասխան դիմումատուին:
- 2.5. Ներկայացված գրանցման դիմումը մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն:

- 2.6. Պայմանագրի կնքման դեպքում Օպերատորը Անդամին շնորհում է առևտրային ծածկագրի նախադիր (2 նիշ) և Ձև R101-ի երկու օրինակներից մեկը հետ է վերադարձնում Անդամին, Պայմանագրի օրինակի հետ մեկտեղ:
- 2.6'. Անդամը Բորսայում արտարժույթով արտահայտված կորպորատիվ արժեթղթերի առևտրին մասնակցելու նպատակով Դեպոզիտարիա է ներկայացնում համապատասխան դիմում և լրացված՝ սույն կանոնների Հավելված 10-ով սահմանված Ձև R 101FX-ը, 2 օրինակից: Անդամի կողմից դիմումը և Ձև R 101FX-ը Օպերատորին է ներկայացվում Բորսայում արտարժույթով արտահայտված արժեթղթերի առևտրին մասնակցելուց առնվազն 1 աշխատանքային օր առաջ: Օպերատորի գրոծադիր մարմնի ղեկավարը 1 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում կամ մերժում է սույն կետում նշված դիմումը, այդ մասին ծանուցելով համապատասխան Անդամին: Ներկայացված դիմումը մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի խախտում: Դիմումի բավարարման դեպքում Օպերատորը Անդամին շնորհում է առևտրային ծածկագրի նախադիր՝ 2 նիշ, վերջինիս տրամադրում է սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված հաշվետվության պաշտպանված տարբերակը և Օպերատորի կողմից ստորագրված և կնքված Ձև R 101FX-ի մեկ օրինակը:
- 2.7. Անդամը զրկվում է անդամությունից կամ նրա անդամությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում.
- 2.7.1. Անդամի՝ Օրենքով նախատեսված մասնագիտական գործունեության լիցենզիայի դադարում.
- 2.7.2. Անդամի լուծարմամբ.
- 2.7.3. Օպերատորի դիտորդ խորհրդի որոշման հիման վրա, եթե Անդամը առնվազն երկու անգամ խախտել է սույն կանոնակարգի պահանջները և այդ մասին ծանուցվել է Օպերատորի կողմից.
- 2.7.4. Օպերատորի դիտորդ խորհրդի որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգով այլ սահմանված դեպքերում.
- 2.7.5. Բորսայում կորպորատիվ արժեթղթերի առևտրի Անդամի իրավունքը դադարեցվել է.
- 2.7.6. Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պայմանագրի լուծմամբ:

### 3. Համակարգի անդամների իրավունքները և պարտականությունները

- 3.1. Անդամը իրավունք ունի Օպերատորին ներկայացնել միայն Օպերատորի սույն կանոնակարգով սահմանված հանձնարարականներ, հանձնարարագրեր, տվյալներ և/կամ այլ փաստաթղթեր:
- 3.2. Անդամը պարտավոր է ներկայացնել հանձնարարականներ, հանձնարարագրեր, տվյալներ և/կամ այլ փաստաթղթեր սույն կանոնակարգով սահմանված ժամկետներին համաձայն և սույն կանոնակարգով սահմանված եղանակով:
- 3.3. Սույն կանոնակարգով սահմանված Ձև R 101-ում ներառվող ցանկացած տեղեկության յուրաքանչյուր փոփոխության դեպքում Անդամը պարտավոր է ներկայացնել նոր Ձև R101, 2 օրինակից և համապատասխան գրություն կատարված փոփոխության վերաբերյալ, Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելուց և գործարքներ կնքելուց առնվազն 1 աշխատանքային օր առաջ: Անդամի կողմից սույն կետով ներկայացված դիմումը մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն: Դիմումի մերժման դեպքում Օպերատորը այդ մասին ծանուցում է Անդամին դիմումի ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

- 3.4. Անդամը պարտավոր է իր ինտերնետ կայքի կամ դրա բացակայության դեպքում նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության (պարբերական մամուլի) միջոցներով շահագրգիռ անձանց տեղեկացնել Համակարգում իր անդամության և Համակարգի կանոնների մասին՝ Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.5. Անդամը իր հաճախորդներին պարտավոր է տրամադրել տարբերակված ծածկագրեր (5 նիշ), որոնք չեն կրկնում միմյանց: Առևտրային ծածկագրերը ձևավորվում են.
- 3.5.1. Անդամի հաճախորդի գործարքների կատարման համար (7 նիշ= 2 նիշ (առևտրային ծածկագրի նախադիր)+ 5 նիշ (տրվում է առևտրի մասնակցի կողմից)) : Միևնույն անձնական հաշվին շնորհված առևտրային ծածկագիրը հետագայում ենթակա չէ փոփոխման կամ նորից կիրառման այլ անձնական հաշիվների համար:
- 3.5.2. Անդամի սեփական գործարքների կատարման համար (7 նիշ= 2 նիշ (առևտրային ծածկագրի նախադիր) + 5 նիշ (առևտրի մասնակցի բորսայական հապավում))
- 3.5.3. Անդամի անվանատիրոջ հաշվով գործարքների կատարման համար (7 նիշ= 2 նիշ (առևտրային ծածկագրի նախադիր) + NOMIN տառերը):
- 3.6. Անդամները պարտավոր են եռամսյակային կտրվածքով Օպերատորին ներկայացնել իրենց ներքին աուդիտի կողմից լրացված հաշվետվություն ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների վերաբերյալ (Հավելված 6), մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 15-րդ աշխատանքային օրը ներառյալ: Իսկ Եթե Անդամը հաշվետու եռամսյակի ընթացքում ներդրումային ծառայություններ չի մատուցել, ապա սույն կետով սահմանված ժամանակահատվածում Օպերատորին գրավոր տեղեկացնում է այդ մասին:
- 3.7. Անդամը սույն կանոնակարգի 3.6. կետով սահմանված հաշվետվությունը Օպերատորին է ներկայացնում նաև ընթացիկ գործունեության՝ վերը նշված հաշվետվությամբ սահմանված շրջանակներում տեղ գտած յուրաքանչյուր խախտման հայտնաբերման դեպքում, դրա հայտնաբերման պահից 5, իսկ խախտման վերացման դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.8. Անդամները, որոնք ունեն անվանատիրոջ հաշիվ, պարտավոր են իրենց մոտ բացված արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերի մնացորդների համադրման և ճշգրտման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Օպերատորին հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ներառյալ:
- 3.9. Եթե Անդամը սույն կանոնակարգով սահմանված դեպքերում Օպերատորին ներկայացնում է սույն կանոնակարգի 7.2., 7.11. կետերով և Հավելված 8-ով, Հավելված 9-ով սահմանված հանձնարարագրերի, ինչպես նաև 8.10. կետով սահմանված հաշվետվությունների թղթային տարբերակ(ներ)ը, ապա վերջիններս ներկայացվում են դրանց էլեկտրոնային տարբերակների հետ մեկտեղ՝ էլեկտրոնային կրիչով:
- 3.10. Անդամը պետք է գործի համաձայն սույն կանոնակարգի պահանջների, Համակարգը կարգավորող, իր կողմից կնքված և գործող պայմանագրերի դրույթների և այլ նորմատիվ իրավական ակտերի:
- 3.11. Անդամի նկատմամբ անվճարունակության գործընթաց սկսվելու դեպքում Անդամը պետք է այդ մասին անհապաղ ծանուցի Օպերատորին: Ծանուցման մեջ պետք է նշվի անվճարունակության գործընթացի սկսման ամսաթիվը:
- 3.12. Այն դեպքում, երբ Անդամին տրված լիցենզիան կասեցվել կամ չեղյալ է համարվել, ապա Անդամը պետք է այդ մասին անմիջապես գրավոր ծանուցի Օպերատորին: Ծանուցման ուշացման դեպքում Անդամը պատասխանատվություն է կրում ուշացման պատճառով առաջացած բոլոր հետևանքների համար:

- 3.13. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից տրամադրված սույն կանոնակարգի 17.2. կետով սահմանված հաշվետվության տեղեկությունները համեմատել իրեն կամ Հաշվարկային գործակալին ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով տրամադրված կամ ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների առկայության դեպքում Անդամը պարտավոր է այդ մասին մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16.30-ը տեղեկացնել Օպերատորին:
- 3.14. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից տրամադրված սույն կանոնակարգի 17.1 կետով սահմանված քաղվածքը համեմատել իր մոտ առկա այլ աղբյուրներից ստացված նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Անդամը պարտավոր է այդ մասին մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16.30-ը տեղեկացնել Օպերատորին:
- 3.15. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից Համակարգի սպասարկմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման համար կատարել վճարումներ Օպերատորի «Սակագների մասին» կանոններով սահմանված կարգով:

#### **4. Համակարգի օպերատորի իրավունքները և պարտականությունները**

- 4.1. Համակարգի օպերատորը պատասխանատու է Համակարգի անվտանգ և արդյունավետ գործունեության համար:
- 4.2. Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման դիմումի ներկայացման օրվանից երեք օրվա ընթացքում Օպերատորը Անդամին տրամադրում է նույնականացնող համար և Համակարգի սպասարկման հետ կապված հանձնարարագրերի և այլ փաստաթղթերի (անհրաժեշտության դեպքում) պաշտպանված տարբերակները, որոնք սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 2, 3, 4, 6-ում:
- 4.3. Օպերատորը Օրենքով սահմանված իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է աշխատանքային խումբ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշման հիման վրա: Աշխատանքային խումբը ստեղծվում է 1 տարի ժամկետով: Աշխատանքային խումբը բաղկացած է Օպերատորի 3 աշխատակիցներից: Աշխատանքային խմբի կողմից սույն կանոնակարգի 3.6 և 3.8 կետերով սահմանված հաշվետվությունների վերաբերյալ կազմվում է եզրակացություն: Եզրակացությունը հաստատվում է աշխատանքային խմբի կողմից քվորումով՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Քվորումը համարվում է ապահովված, եթե քվեարկությանը մասնակցում են աշխատանքային խմբի առնվազն 2 անդամ: Քվորումը չապահովվելու կամ քվեարկության արդյունքում կողմ/դեմ ձայների հավասարության դեպքում Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի կողմից որոշում է կայացվում աշխատանքային խումբը 1 անդամով համալրելու վերաբերյալ:
- 4.4. Սույն կանոնակարգի 4.3 կետով սահմանված աշխատանքային խումբը՝ ստանալով սույն կանոնակարգի 3.6. և 3.8 կետերով սահմանված հաշվետվությունները՝ սույն կանոնակարգի 3.6. կետով սահմանված ժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է ներկայացնում Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարին վերոնշյալ փաստաթղթերի վերաբերյալ:

Աշխատանքային խմբի կողմից սույն փաստաթղթերի վերաբերյալ 2 և ավելի դիտողություններով եզրակացություն կազմելու դեպքում Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը կարող է որոշում կայացնել՝ այն ներկայացնելու Օպերատորի դիտորդ խորհրդի նիստի քննարկմանը: Խորհրդի նիստի ժամանակ որոշում է կայացվում Անդամի նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու վերաբերյալ ընդհուպ միջև անդամությունից զրկում:

- 4.5. Սույն կանոնակարգի 4.3 կետով սահմանված աշխատանքային խումբը յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15-րդ աշխատանքային օրը Անդամի պաշտոնական կայքում կայքում, դիտում և համեմատում է Անդամների կողմից հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հրապարակվող հաշվետվությունը, որի վերաբերյալ տեղեկություններն արտացոլվում են աշխատանքային խմբի կողմից տրված եզրակացության մեջ սույն կանոնակարգի 4.4. կետով սահմանված կարգով:
- 4.6. Օպերատորը, Օրենքով սահմանված վճարունակության նկատմամբ վերահսկողության գործառույթի իրականացման շրջանականներում յուրաքանչյուր աշխատանքային օր հետևում է Անդամի պաշտոնական կայքում և [cba.am](http://cba.am) և/կամ [www.arka.am](http://www.arka.am) կայքերում Անդամի անվճարունակության վերաբերյալ տեղեկությունների առկայությանը: Նման տեղեկությունների առկայության դեպքում Օպերատորի համապատասխան իրավասու աշխատակիցը տեղեկացնում է այդ մասին գործադիր մարմնի ղեկավարին: Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը՝ հիմք ընդունելով ներկայացված տեղեկատվության բնույթը և կարևորությունը, կարող է մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել Անդամի գործունեության կասեցման վերաբերյալ մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:
- 4.7. Համակարգի օպերատորը պարզելով, որ Անդամը ճանաչվել է անվճարունակ, շարունակում է այդ Անդամի կողմից տրված հանձնարարագրերի կատարումը:
- 4.8. Եթե ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում սատեցվում է Անդամի պարտատերերի պահանջների բավարարումը (սահմանվում է մորատորիում) կամ կասեցվում է Անդամի գործունեությունը, ապա Համակարգի օպերատորը պարտավոր է անհապաղ կասեցնել այդ անդամի կողմից տրված հանձնարարագրերի ընդունումը և այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:
- 4.9. Անդամին դատարանի կողմից սնանկ ճանաչելու դեպքում Համակարգի օպերատորը պարտավոր է անհապաղ դադարեցնել այդ Անդամի կողմից տրված հանձնարարագրերի ընդունումը և այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:
- 4.10. Համակարգի օպերատորը ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին Օպերատորի և Անդամի միջև կնքված Պայմանագրի լրացումների և փոփոխությունների մասին:
- 4.11. ՀՀ կենտրոնական բանկի պահանջով Համակարգի օպերատորը պարտավոր է տրամադրել այլ անհրաժեշտ տեղեկություններ Համակարգի գործունեության վերաբերյալ:

## **5. Համակարգի գործունեության սկզբունքները, քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման եղանակը**

- 5.1. Համակարգի գործունեությունը հիմնվում է անվտանգության, արդյունավետության և թափանցիկության վրա:

- 5.2. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունները որոշումը և հաշվանցումը կատարում է կենտրոնացված քլիրինգի եղանակով՝ զուտացման միջոցով:
- 5.3. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է արժեթղթերի և դրամական միջոցների ամբողջական ապահովվածության եղանակով՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:
- 5.4. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է T+0 ժամանակահատվածում, T-ն Բորսայում գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ 0-ն գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը:
- 5.5. Անդամը սույն կանոնարգի 7.2., 7.11. կետերով և Հավելված 8-ով, Հավելված 9-ով սահմանված հանձնարարագրերը , ինչպես նաև 8.10. կետով սահմանված հաշվետվությունը Օպերատորին է ներկայացնում էլեկտրոնային եղանակով, Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցի միջոցով: Վճարման հանձնարարականները և դրանց կատարումը հավաստող հաստատումները առաքվում են էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Փաստաթղթային եղանակով փաստաթղթաշրջանառությունը կարող է տեղի ունենալ, եթե.
- 5.5.1. Անդամի մոտ Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցը ժամանակավորապես խափանվել է կամ
- 5.5.2. Անդամը չունի իրավասու էլեկտրոնային հասցե կամ
- 5.5.3. Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցը կամ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգը ժամանակավորապես խափանվել է Օպերատորի կամ ՀՀ կենտրոնական բանկի մոտ: Նման խափանումներ են հանդիսանում այն տեխնիկական խնդիրները, որոնց հետևանքով անհնար է դառնում էլեկտրոնային եղանակով սույն կանոնակարգով սահմանված հանձնարարագրերի, հանձնարարականների և այլ փաստաթղթերի ընդունումը Օպերատորի կողմից: Եթե խափանումը տեղի է ունեցել ՀՀ կենտրոնական բանկի մոտ, ապա վերջինս այդ մասին տեղեկացնում է Օպերատորին և Բորսային: Եթե խափանումը տեղի է ունեցել Օպերատորի մոտ, ապա Օպերատորը տեղեկացնում է խափանման մասին Համակարգի բոլոր Անդամներին, Բորսային և ՀՀ կենտրոնական բանկին
- 5.5.4. Սույն կանոնակարգի 5.5.3. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերի և/կամ հանձնարարագրերի և/ կամ վճարման հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետը երկարացվում է 30 րոպեով: Առևտրային նստաշրջանի սկիզբը ևս հետաձգվում է 30 րոպեով, որի մասին Բորսան տեղեկացնում է Անդամներին, Օպերատորին և ՀՀ կենտրոնական բանկին:
- 5.6. Օպերատորի և Անդամների միջև փաստաթղթաշրջանառությունը կարող է տեղի ունենալ էլեկտրոնային եղանակով, Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցի միջոցով, ինչպես նաև փաստաթղթային եղանակով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 5.5. կետով սահմանված փաստաթղթերի, որոնց փաստաթղթային եղանակով ներկայացումը կարող է տեղի ունենալ սույն կանոնակարգի 5.5.1., 5.5.2. և 5.5.3. կետերով սահմանված դեպքերում:
- 5.7. Անդամների կողմից սույն կանոնակարգով ներկայացվող փաստաթղթերի, հանձնարարականների և հանձնարարագրերի թղթային տարբերակները պետք ստորագրված և կնքված լինեն Անդամի լիազոր ներկայացուցչի կողմից: Անդամների կողմից սույն կանոնակարգի 7.2., 7.11. կետերով և Հավելված 8-ով, Հավելված 9-ով սահմանված հանձնարարագրերը , ինչպես նաև 8.10. կետով սահմանված հաշվետվությունը թղթային տարբերակի ներկայացման դեպքում Օպերատորին է ներկայացնում երկու օրինակից: Օրինակներից մեկը ներկայացման պահին

Օպերատորի նշումներով (ընդունման ամսաթիվ և ստորագրություն) վերադարձվում է Անդամին:

5.8. Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար Անդամը Ձև R 101-ում ներկայացնում է 3 իրավասու հաշիվների համարներ, մեկը՝ սեփական գործարքների համար, մյուսը՝ հաճախորդների գործարքների համար և երրորդը Անդամի՝ անվանատիրոջ հաշվով կատարվելիք գործարքների համար, եթե տվյալ Անդամը ունի պահառության ոչ հիմնական ծառայության մատուցման իրավունք (եթե այն տարբեր է հաճախորդների դրամական միջոցների համար բացված իրավասու հաշվի համարից):

5.9. Օպերատորի կողմից վճարման հանձնարարականների կազմման ժամանակ տասնորդական նիշերի առկայության դեպքում դրանք

5.9.1. Հայաստանի Հանրապետության դրամի դեպքում՝ լումաները, կլորացվում են 10 «տասե նիշի ճշտությամբ, ընդ որում զրոյից մեծ տասնավորի դեպքում տասնավորը դառնում է զրո:

5.9.2. արտարժույթի դեպքում՝ կլորացվում են տվյալ արժույթի տասնորդական նիշերի ճշտությամբ:

Սույն կետով սահմանված գործողությունների կատարման դեպքում Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվում մնացած տասնորդական նիշերը Օպերատորը փոխանցում է իր հաշվարկային հաշիվներից որևէ մեկին: Ընդ որում, սույն կետով սահմանված գործողություններն իրականացվում են վերջնահաշվարկի փուլում:

5.10. Էլեկտրոնային վճարումների համակարգով փաստաթղթերը պետք է առաքվեն Էլեկտրոնային վճարումների համակարգի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն:

5.11. Սույն կանոնակարգի համաձայն՝

5.11.1. ՍիԲիԷյՆեթ համակարգային ցանցով ուղարկված փաստաթղթի ստացման պահ է համարվում փաստաթղթի առաքման անդորրագրում նշված ժամանակը

5.11.2. Էլեկտրոնային վճարումների համակարգով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ «ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը.

5.11.3. թղթային եղանակով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ փաստաթուղթը ստացող կողմի լիազորված աշխատակցին փաստաթղթի հանձնման պահը :

## 6. Երաշխիք

6.1. Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Անդամը մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը կամ առևտրային նստաշրջանի ընթացքում սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է.

6.1.1. իր անձնական, անվանատիրոջ կամ իր հաճախորդի անձնական, թողարկողի արժեթղթերը Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում՝ նաև թողարկման, հաշիվներում այն արժեթղթերի առևտրային արգելադրումը, որոնցով Անդամը նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին վաճառքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Սույն կետում նշված հաշիվներում արգելադրված արժեթղթերը հանդիսանում են Անդամի կողմից վաճառքի պարտավորությունների կատարման ապահովման միջոց:

6.1.2. իր կամ իր հաճախորդի (անվանատիրոջ) իրավասու հաշվից դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին Հայաստանի Հանրապետության դրամի

և/կամ արտարժույթի այնպիսի ծավալի փոխանցում, որոնցով Անդամը նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին առքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցները հանդիսանում են Անդամի կողմից գնման գործարքների կատարման ապահովման միջոց:

- 6.2. Ռիսկերի նվազեցման և արդյունավետ կառավարման նպատակով Օպերատորի մոտ Համակարգի սպասարկումը ապահովող համակարգչային տեխնիկայի խափանման դեպքում Օպերատորը աշխատեցնում է պահեստային համակարգչային տեխնիկան սույն կանոնակարգով սահմանված գործողությունների անխափան կատարման համար Դեպոզիտարիայի «Արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգ»-ի դրույթներին համապատասխան:
- 6.3. Համակարգի գործունեությունը ապահովող ծրագրային համակարգում ներառվող տեղեկությունները յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում արխիվացվում և պահվում են:
- 6.4. Անդամների կողմից Օպերատորին ներկայացված Ձև R 101-ում և/կամ Ձև R 101FX-ում ներառված իրավասու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են Համակարգը ապահովող ծրագրային համակարգ երկու աշխատակցի կողմից մեկ ծածկագրի համապատասխան բաժինները մուտքագրելու միջոցով, առավելագույնս նվազեցնելով գործառնական ռիսկը:
- 6.5. Նույն գործողությունների կրկնակի կատարումը բացառվում է, քանի որ հաջողությամբ կատարված կարգադրությունները դուրս են գալիս հանձնարարականների, հանձնարարագրերի հերթից:
- 6.6. Սույն կանոնակարգով չնախատեսված արտակարգ իրավիճակներում գործողությունները կարգավորվում են համապատասխան պայմանագրերով:

## **7. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում**

- 7.1. Արժեթղթերի առևտրային արգելադրումը կատարվում է Օպերատորի կողմից Անդամից ստացված արգելադրման հանձնարարագրի հիման վրա, բացառությամբ, եթե.
  - 7.1.1. առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն կամ
  - 7.1.2. ներկայացված հանձնարարագիրը լրացված է թերի և/կամ դրանում ներառված տեղեկությունները արժանահավատ չեն:
- 7.2. Առևտրային արգելադրման հանձնարարագիրը՝ Ձև B 402 (տես Հավելված 2) պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
  - 7.2.1. թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը .
  - 7.2.2. արժեթղթերի արգելադրման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
  - 7.2.3. անձնական հաշվի համարը.
  - 7.2.4. գրանցված սեփականատիրոջը շնորհված տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ),
  - 7.2.5. Անդամին շնորհված ծածկագրի նախադիրը և բորսայական հապավումը
  - 7.2.6. արգելադրվող արժեթղթերի քանակը.
  - 7.2.7. Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).
  - 7.2.8. Անդամի անվանումը
  - 7.2.9. Օպերատորի նշումներ (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).
- 7.3. Անդամը Օպերատորին կարող է ներկայացնել առևտրային արգելադրման հանձնարարագիր՝ Ձև B 402, որն էլ Օպերատորին է ներկայացվում ոչ ուշ քան առևտրային օրվա 10<sup>30</sup> –ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում ոչ ուշ քան մինչև ժամը 10<sup>20</sup>-ը):

- 7.4. Օպերատորը Անդամից ստացված առևտրային արգելադրման մեկ հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է ըստ հանձնարարագրերի ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Օպերատորը տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում հեռախոսով) արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարագրում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ, եթե.
- 7.4.1. դրանում առկա են 7.1.1. կամ 7.1.2. կետերում նշված անհամապատասխանությունները, և
- 7.4.2. հանձնարարագիրը ներկայացվել է մինչև առևտրային օրվա ժամը 10.<sup>10</sup>-ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10.<sup>00</sup>-ն):
- 7.5. Համեմատության արդյունքում 7.4.2. կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հանձնարարագրերում առկա անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում հանձնարարագրի կատարումը մերժվում է, որի մասին տեղեկացվում է Անդամը:
- 7.6. Սույն կանոնակարգի 7.4. կետում նշված հաղորդագրությունը ստանալու (տեղեկացման) դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup> (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10<sup>20</sup>-ը) արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարագրի ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին:
- 7.7. Սույն կանոնակարգի 7.6. կետով սահմանված ժամկետից ուշ ստացված առևտրային արգելադրման հանձնարարագրերի կատարումը իրականացվում է արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման առաջին փուլում:
- 7.8. Արժեթղթերի առևտրային արգելադրումը դադարեցվում է, եթե.
- 7.8.1. Անդամի կողմից ներկայացվել է առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիր.
- 7.8.2. Բորսայում առևտրի ընթացքում կնքված գործարքների արդյունքում արգելադրված արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է փոխանցման.
- 7.8.3. Բորսայում առևտուր իրականացնելու Անդամի իրավունքը կասեցվել կամ դադարեցվել է.
- 7.8.4. Արժեթղթերը մարվել են.
- 7.8.5. Օպերատորը մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10:20-ը պետական իրավասու մարմինների կողմից ստացել է արգելանքի կամ սնանկության մասին համապատասխան որոշում: Սույն կետում նշված ժամից ուշ ստացված որոշումից բխող գործառնությունները կատարվում են առևտրային նստաշրջանի արդյունքների վերջնահաշվարկից հետո:
- 7.9. Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի հիման վրա արգելադրված արժեթղթերի արգելադրման դադարեցումը կատարվում է մինչև նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ը կամ Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո, բայց ոչ ուշ քան Օպերատորին հանձնարարագրի ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 7.10. Բորսայում առևտուր իրականացնելու Անդամի իրավունքը կասեցվելու կամ դադարեցվելու հիմքով արժեթղթերի արգելադրման դադարեցումը կատարվում է դրա մասին Օպերատորի կողմից տեղեկանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

- 7.11. Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիրը՝ B 403 (տես Հավելված 3) պետք է պարունակի,
- 7.11.1. թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը .
  - 7.11.2. արժեթղթերի արգելադրման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
  - 7.11.3. անձնական հաշվի համարը.
  - 7.11.4. արգելադրումը դադարեցվող արժեթղթերի քանակը.
  - 7.11.5. Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).
  - 7.11.6. Անդամի անվանումը
  - 7.11.7. Օպերատորի նշումներ (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).
- 7.12. Օպերատորը Անդամից ստացված առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի կատարումը մերժում է և այդ մասին տեղեկացնում է համապատասխան Անդամին, եթե առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիրը ներկայացվել է մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10<sup>10</sup>-ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10.<sup>00</sup>-ն):
- 7.13. Համեմատության արդյունքում 7.12. կետում սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրերում առկա անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի կատարումը մերժվում է, որի մասին տեղեկացվում է Անդամը:
- 7.14. Սույն կանոնակարգի 7.12. կետում նշված տեղեկացման դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10.<sup>20</sup>-ը) Օպերատորին ներկայացնել արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի ուղղված տարբերակը:
- 7.15. 10<sup>30</sup> ից ուշ ստացված առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի կատարումը Օպերատորի կողմից իրականացվում է Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո :

## **8. Դրամական միջոցների փոխանցումը նախնական դեպոզիտային նպատակով**

- 8.1. Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Անդամները անմիջապես, կամ առևտրային բանկ չլինելու դեպքում՝ իրենց իրավասու հաշիվները վարող Հաշվարկային գործակալների միջոցով մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իրենց իրավասու հաշիվներից Օպերատորի դրամի առևտրային հաշվին և/կամ արտարժույթի առևտրային հաշվին են փոխանցում (դեպոզիտացնում) Բորսայում արժեթղթերի առևտրի համար նախատեսված դրամական միջոցները:
- 8.2. Դրամական միջոցների փոխանցումը Օպերատորի դրամի կամ արտարժույթի առևտրային հաշվի վրա իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված համապատասխան հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:

8.3. Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Դրամի փոխանցումը իրականացվում է ՀՏ 100 հաղորդագրության միջոցով, իսկ արտարժույթի փոխանցումը՝ ՀՏ 203 հաղորդագրության միջոցով, մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10<sup>00</sup>, իսկ թղթային եղանակով<sup>3</sup> մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10<sup>00</sup>-ն, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան (ՀՏ 100 և կամ ՀՏ 203) հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին: Ընդ որում, թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա Օպերատորին ուղարկված ՀՏ 100-ի և/կամ ՀՏ 203-ի նպատակ (70A) դաշտում պետք է նշվեն.

ա) «Քե տառը և դրանից անմիջապես հետո (առանց բացատների)

բ) այն իրավասու հաշվի համարը, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

Նպատակ (70A) դաշտում սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված նշումներից որևէ մեկի բացակայության կամ ցանկացած այլ տեղեկությունների և/կամ նշումների առկայության դեպքում Օպերատորին ուղարկված հաղորդագրության ընդունումը մերժվում է, եթե վճարող (50A) դաշտում նշված հաշվի համարը իրավասու հաշիվ չէ: Եթե սույն կետով նշված դեպքում վճարող (50A) դաշտում լրացված հաշվի համարը իրավասու հաշվի համար է, ապա այն կդիտարկվի որպես հաշվի համար, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

8.4 ՀՀ կենտրոնական բանկը պետք է ապահովի հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը Օպերատորին առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 30 րոպե առաջ:

8.5 Եթե Օպերատորի դրամի առևտրային հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից, ապա Օպերատորին ուղարկված՝ սույն կանոնակարգի 8.3. կետով սահմանված հաղորդագրությունների նպատակ (70A) դաշտում պետք է նշվեն.

ա) «Քե տառը և դրանից անմիջապես հետո (առանց բացատների)

բ) այն իրավասու հաշվի համարը, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

Նպատակ (70A) դաշտում սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված նշումներից որևէ մեկի բացակայության կամ ցանկացած այլ տեղեկությունների և/կամ նշումների առկայության դեպքում Օպերատորին ուղարկված սույն կանոնակարգի 8.3. կետով սահմանված հաղորդագրության ընդունումը մերժվում է և Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում հետփոխանցման վճարման էլեկտրոնային հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով :

8.6 Եթե ՀՀ կենտրոնական բանկում անհնար է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանձնարարականների ընդունումը մինչև ժամը 10<sup>00</sup> -ը, ապա ՀՀ կենտրոնական բանկը, ոչ ուշ քան առևտրային նստաշրջանի սկսվելուց 30 (երեսուն) րոպե առաջ այդ մասին հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին և Բորսային: Բորսան իր կանոններին համապատասխան որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, իսկ Օպերատորը ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Անդամներին: Անդամները կամ դրանց սպասարկող Հաշվարկային գործակալները, որոնց էլեկտրոնային հանձնարարականները չեն ստացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից, կարող են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել թղթային հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը Օպերատորի առևտրային հաշվին:

8.7 Եթե Օպերատորի կողմից անհնար է հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների էլեկտրոնային եղանակով ստացումը, ապա դրանք Օպերատորը ՀՀ կենտրոնական բանկից ստանում է էլեկտրոնային կրիչով և,

անհրաժեշտության դեպքում, դիմում է Բորսային՝ առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու նպատակով:

- 8.8 Եթե Բորսայում առկա տեխնիկական խնդիրների կամ այլ պատճառների հետևանքով որոշում է ընդունվում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, ապա Բորսան այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷյնԵթ համակարգչային ցանցով ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է Անդամներին և ՀՀ կենտրոնական բանկին:
- 8.9 Սույն կանոնակարգի 8.6, 8.7. և 8.8. կետերով սահմանված դեպքերում առևտրային նստաշրջանի սկզբի հետաձգման ժամկետով հետաձգվում է նաև սույն գլխի 8.3. և 8.4. կետերում սահմանված՝ հանձնարարականների և հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացման ժամկետները:
- 8.10 Անդամը դրամի առևտրային հաշվին և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Օպերատորին ոչ ուշ քան առևտրային օրվա 10<sup>30</sup> –ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում ոչ ուշ քան առևտրային օրվա ժամը 10<sup>20</sup>-ը): Այն դեպքում, երբ Անդամը սույն կանոնակարգով սահմանված կարգով դիմել է նաև Բորսայում արտարժույթով արտահայտված արժեթղթերի առևտրին մասնակցելու համար, ապա Օպերատորին ներկայացնում է միայն սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված Ձև M501FX հաշվետվությունը: Այլապես, երբ Անդամը չի դիմել Բորսայում արտարժույթով արտահայտված արժեթղթերի առևտրին մասնակցելու համար, ներկայացնում է սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված Ձև M501-ը հաշվետվությունը: M501 և M501FX հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.
  - 8.10.1 Անդամի սեփական գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ՝
    - 8.10.1.1 Անդամին շնորհված բորսայական հապավումը (5 նիշ).
    - 8.10.1.2 Անդամի անձնական հաշվի համարը
    - 8.10.1.3 դրամական միջոցների գումարը.
    - 8.10.1.4 արժույթը (միայն M501FX հաշվետվության ներկայացման դեպքում).
  - 8.10.2 Անդամի հաճախորդի գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ՝
    - 8.10.2.1 գրանցված սեփականատիրոջը շնորհված տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ).
    - 8.10.2.2 Անդամի հաճախորդի անձնական հաշվի համարը.
    - 8.10.2.3 դրամական միջոցների գումարը.
    - 8.10.2.4 արժույթը (միայն M501FX հաշվետվության ներկայացման դեպքում).
  - 8.10.3 Անդամի՝ անվանատիրոջ գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ՝
    - 8.10.3.1 Անդամի՝ անվանատիրոջ անձնական հաշվի համարը
    - 8.10.3.2 Անդամի անվանատիրոջ անձնական հաշվին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ-NOMIN)
    - 8.10.3.3 դրամական միջոցների գումարը.
    - 8.10.3.4 արժույթը (միայն M501FX հաշվետվության ներկայացման դեպքում).
  - 8.10.4 Նշում դրամի առևտրային հաշվին փոխանցվելիք դրամական միջոցների վերաբերյալ առ այն, թե որ առևտրային նստաշրջանի համար են դրանք նախատեսվում (ամսաթիվը).
  - 8.10.5 Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).
  - 8.10.6 Անդամի անվանումը
  - 8.10.7 Օպերատորի նշումներ (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում).

- 8.11 Օպերատորը Անդամից ստացված հաշվետվությունում՝ Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա նույնարժեքային տեղեկությունների՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հաշվետվությունների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Օպերատորը մերժում է Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունների ընդունումը Համակարգ և տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում հեռախոսով) ներկայացված հաշվետվությունում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ, եթե հաշվետվությունը ներկայացվել է մինչև առևտրային օրվա ժամը 10.<sup>10</sup>-ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10<sup>00</sup>-ն)և:
- 8.11.1 առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն կամ
- 8.11.2 ներկայացված հաշվետվությունը լրացված է թերի և/կամ դրանում ներառված տեղեկությունները արժանահավատ չեն:
- 8.12 Սույն կանոնակարգի 8.11. կետում նշված հաղորդագրությունը ստանալու (տեղեկացման) դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ը (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև առևտրային օրվա ժամը 10<sup>20</sup>-ը) Ձև M 501 կամ Ձև M501FX հաշվետվության ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին:
- 8.13 Սույն կանոնակարգի 8.10. կետով սահմանված ժամկետից ուշ ստացված Ձև M 501 կամ Ձև M501FX հաշվետվության ընդունումը Համակարգ կատարվում է դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման առաջին փուլում:
- 8.14 Օպերատորը Անդամից ստացված հաշվետվությունում՝ Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) ՀՀ կենտրոնական բանկից ստացված նույնարժեքային տեղեկությունների հետ նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ից հետո: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված համապատասխան տեղեկությունների ընդունումը մերժում է և այդ մասին տեղեկացվում է Անդամը:
- 8.15 Համեմատության արդյունքում 8.11. կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում Օպերատորը մերժում է Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունների ընդունումը Համակարգ:

## **9 Առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի լրացուցիչ դեպոնացում**

- 9.7 Անդամը առևտրային նստաշրջանի ընթացքում կարող է կատարել արժեթղթերի լրացուցիչ դեպոնացում երկու փուլերով: Անդամը արժեթղթերի լրացուցիչ դեպոնացում կարող է կատարել միայն իր սեփական, անվանատիրոջ անձնական հաշիվներով, ինչպես նաև այն հաճախորդի անձնական հաշիվով, որի անձնական հաշիվն առևտրային նստաշրջանի սկզբում առկա են եղել դեպոնացված արժեթուղթ կամ իրավասու հաշիվն՝ դեպոնացված դրամական միջոց:
- 9.8 Արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման առաջին փուլում Անդամը նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 11<sup>00</sup>-ն (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում 10<sup>30</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 10<sup>50</sup>) Օպերատորին է ներկայացնում արժեթղթերի առևտրային արգելադրման մեկ հանձնարարագիր՝ Ձև B 402:

- 9.9 Արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլում Անդամը նույն առևտրային օրվա ժամը 11<sup>00</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 12<sup>30</sup> (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում 11<sup>00</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 12<sup>20</sup>) Օպերատորին է ներկայացնում արժեթղթերի առևտրային արգելադրման մեկ հանձնարարագիր՝ Ձև B 402:
- 9.10 Օպերատորը Անդամից ստացված սույն կանոնակարգի 9.2 կետով սահմանված հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարագրերի ստացման հաջորդականության: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը մերժում է հանձնարարագրի կատարումը և այդ մասին տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում հեռախոսով), եթե դրանում առկա են 7.1.1. կամ 7.1.2. կետերում նշված անհամապատասխանությունները:
- 9.11 Սույն կանոնակարգի 9.4. կետում նշված հաղորդագրությունը ստանալու (տեղեկացման) դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 12<sup>30</sup> (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում մինչև նույն առևտրային օրվա ժամը 12<sup>20</sup>) Ձև B 402-ի ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին, որն էլ Օպերատորի կողմից ենթակա է կատարման արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլում:
- 9.12 Օպերատորը Անդամից ստացված սույն կանոնակարգի 9.3 կետով սահմանված հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարագրերի ստացման հաջորդականության: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը մերժում է հանձնարարագրի կատարումը և այդ մասին տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում հեռախոսով), եթե դրանում առկա են 7.1.1. կամ 7.1.2. կետերում նշված անհամապատասխանությունները:
- 9.13 Սույն կանոնակարգի 9.6 կետով սահմանված կարգով մերժված հանձնարարագրերը նույն առևտրային օրվա ընթացքում փոփոխման և ճշգրտման ենթակա չեն:
- 9.14 Սույն կանոնակարգի 9.3 կետով սահմանված ժամկետից ուշ ստացված հանձնարարագրերի կատարումը մերժվում է:

## **10 Առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացում**

- 10.1. Անդամը առևտրային նստաշրջանի ընթացքում կարող է կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացում երկու փուլերով: Անդամը դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացում կարող է կատարել միայն իր սեփական, անվանատիրոջ իրավասու հաշիվներով, ինչպես նաև այն հաճախորդի իրավասու հաշվով, որի անձնական հաշվին առևտրային նստաշրջանի սկզբում առկա են եղել դեպոնացված արժեթուղթ կամ իրավասու հաշվին՝ դեպոնացված դրամական միջոց:
- 10.2. Դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման առաջին փուլում Անդամը դրամի առևտրային հաշվին և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն (Ձև M 501 կամ Ձև M501FX) է ներկայացնում Օպերատորին նույն առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup>-ից

մինչև ոչ ուշ քան ժամը 11<sup>00</sup> –ն (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում 10<sup>30</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 10<sup>50</sup>):

10.3. Դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլում Անդամը դրամի առևտրային հաշվին և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն ( Ձև M 501 կամ Ձև M501FX) է ներկայացնում Օպերատորին նույն առևտրային օրվա ժամը 11<sup>00</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 12<sup>30</sup> –ն (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում 11<sup>00</sup>-ից մինչև ոչ ուշ քան ժամը 12<sup>20</sup>):

10.4. Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային վճարումների համակարգի ՀՏ 100 (դրամային միջոցների դեպքում) կամ ՀՏ 203 (արտարժույթային միջոցների դեպքում) հաղորդագրության միջոցով մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10<sup>40</sup>, իսկ թղթային եղանակով՝ մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10<sup>30</sup> դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման առաջին փուլի համար, որոնց կատարման դեպքում <sup>4</sup>ատարումը հաստատող համապատասխան ՀՏ 100 և/կամ ՀՏ 203 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին ոչ ուշ քան մինչև ժամը 11<sup>00</sup>-ն: Ընդ որում, թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա Օպերատորին ուղարկված ՀՏ 100-ի և ՀՏ 203-ի նպատակ (70A) դաշտում պետք է նշվեն.

ա) «Քե տառը և դրանից անմիջապես հետո (առանց բացատների)

բ) այն իրավասու հաշվի համարը, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

Նպատակ (70A) դաշտում սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված նշումներից որևէ մեկի բացակայության կամ ցանկացած այլ տեղեկությունների և/կամ նշումների առկայության դեպքում Օպերատորին ուղարկված հաղորդագրության ընդունումը մերժվում է, եթե հաղորդագրության վճարող (50A) դաշտում նշված հաշվի համարը իրավասու հաշիվ չէ: Եթե սույն կետով նշված դեպքում վճարող (50A) դաշտում լրացված հաշվի համարը իրավասու հաշվի համար է, ապա այն կդիտարկվի որպես հաշվի համար, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

10.5 Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային վճարումների համակարգի ՀՏ 100 (դրամային միջոցների դեպքում) կամ ՀՏ 203 (արտարժույթային միջոցների դեպքում) հաղորդագրության միջոցով մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 12<sup>10</sup>, իսկ թղթային եղանակով՝ մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 12<sup>00</sup>-ն դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլի համար, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 100 և/կամ ՀՏ 203 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին ոչ ուշ քան մինչև ժամը 12<sup>30</sup>: Ընդ որում, թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա Օպերատորին ուղարկված ՀՏ 100-ի և ՀՏ 203-ի նպատակ (70A) դաշտում պետք է նշվեն.

ա) «Քե տառը և դրանից անմիջապես հետո (առանց բացատների)

բ) այն իրավասու հաշվի համարը, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

Նպատակ (70A) դաշտում սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված նշումներից որևէ մեկի բացակայության կամ ցանկացած այլ տեղեկությունների և/կամ նշումների առկայության դեպքում Օպերատորին ուղարկված հաղորդագրության ընդունումը մերժվում է, եթե հաղորդագրության վճարող (50A) դաշտում նշված հաշվի համարը իրավասու հաշիվ չէ: Եթե սույն կետով նշված դեպքում վճարող (50A) դաշտում լրացված հաշվի համարը իրավասու

հաշվի համար է, ապա այն կոփտարկվի որպես հաշվի համար, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

- 10.6 Եթե ՀՀ կենտրոնական բանկում անհնար է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանձնարարականների ընդունումը լրացուցիչ դեպոնացման փուլերում, ապա ՀՀ կենտրոնական բանկը, լրացուցիչ դեպոնացման առաջին փուլի համար ոչ ուշ քան մինչև ժամը 10<sup>40</sup>, իսկ լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլի համար ոչ ուշ քան մինչև ժամը 12<sup>00</sup>-ն այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին և Բորսային: Բորսան իր կանոններին համապատասխան որոշում է ընդունում լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ տեղեկությունները առևտրայի համակարգ մուտքագրման ժամկետը հետաձգելու վերաբերյալ, իսկ Օպերատորը ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Անդամներին: Անդամները կամ դրանց սպասարկող Հաշվարկային գործակալները, որոնց էլեկտրոնային հանձնարարականները չեն ստացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից, կարող են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել թղթային հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը Օպերատորի առևտրային հաշվին
- 10.7 Եթե Օպերատորի կողմից անհնար է հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների էլեկտրոնային եղանակով ստացումը, ապա դրանք Օպերատորը ՀՀ կենտրոնական բանկից ստանում է էլեկտրոնային կրիչով և անհրաժեշտության դեպքում դիմում է Բորսային լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ տեղեկությունները առևտրայի համակարգ մուտքագրման ժամկետը հետաձգելու նպատակով: Բորսան իր կանոններին համապատասխան որոշում է ընդունում լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ տեղեկությունները առևտրայի համակարգ մուտքագրման ժամկետը հետաձգելու վերաբերյալ, իսկ Օպերատորը ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Անդամներին:
- 10.8 Եթե Բորսայում առկա տեխնիկական խնդիրների կամ այլ պատճառների հետևանքով որոշում է ընդունվում լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ տեղեկությունները առևտրային համակարգ մուտքագրման ժամկետը հետաձգելու վերաբերյալ, ապա Բորսան այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է Անդամներին և ՀՀ կենտրոնական բանկին:
- 10.9 Սույն կանոնակարգի 10.6, 10.7. և 10.8. կետերով սահմանված դեպքերում լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ տեղեկությունները առևտրայի համակարգ մուտքագրման ժամկետի հետաձգման ժամկետով հետաձգվում են նաև սույն կանոնակարգի համապատասխանաբար 10.4. կամ 10.5. կետերում սահմանված ժամկետները՝ կախված թե տվյալ տեխնիկական խնդիրը միջոցների լրացուցիչ դեպոնացման որ փուլում է ի հայտ եկել:
- 10.10 Օպերատորը Անդամից ստացված հաշվետվությունում՝ Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա, ՀՀ Կենտրոնական բանկից ստացված նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է ըստ հաշվետվությունների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Օպերատորը մերժում է Ձև M 501-ում կամ Ձև M501FX-ում ներառված տեղեկությունների ընդունումը Համակարգ և տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով ներկայացված հաշվետվությունում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ, եթե դրանում առկա են սույն կանոնակարգի 8.11.1. կամ 8.11.2. կետերում նշված անհամապատասխանությունները:
- 10.11 Եթե Անդամը սույն կանոնակարգի 10.10. կետում նշված հաղորդագրությունը ստանում է դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման առաջին փուլի համար,

ապա Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 12<sup>30</sup> դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվության՝ Ձև M 501-ի կամ Ձև M501FX-ի ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին, որն էլ Օպերատորի կողմից ենթակա է կատարման դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլում:

- 10.12 Եթե Անդամը սույն կանոնակարգի 10.10. կետում նշված հաղորդագրությունը ստանում է դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլի համար, ապա նույն առևտրային օրվա ընթացքում դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվության՝ Ձև M 501-ը կամ Ձև M501FX-ը փոփոխման և ճշգրտման ենթակա չեն:
- 10.13 Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով, եթե
- 10.13.1 Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից
  - 10.13.2 Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել նույն առևտրային օրվա ժամը 12<sup>30</sup>-ից ուշ:
  - 10.13.3 Նույն առևտրային օրվա ժամը 12<sup>30</sup>-ին Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների և Անդամի կողմից ներկայացված՝ հաշվետվություն Ձև M501-ի կամ Ձև M501FX-ի միջև կան անհամապատասխանություններ :

## 11 Առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների ապադեպոնացում

- 11.1. Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում Բորսայից ստանում է տեղեկություններ դրամական միջոցների ապադեպոնացման վերաբերյալ երեք փուլերով՝ համապատասխանաբար ժամը 11<sup>45</sup>-ին , 14<sup>15</sup>-ին և ոչ ուշ քան մինչև ժամը 15<sup>05</sup>-ը:
- 11.2. Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների ապադեպոնացման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա իրականացնում է նախնական ստուգում՝ դրամական միջոցների ապադեպոնացման համար անհրաժեշտ տվյալների համադրելիության և համապատասխանության ուղղությամբ :
- 11.3. Եթե նախնական ստուգման արդյունքում բացահայտվում է անճշտություն, Օպերատորը Բորսայի հետ համատեղ անհապաղ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություն և դրա արդյունքներից կախված կամ ինքնուրույն է ճշտումներ կատարում, կամ էլ դրանք վերադարձնում է Բորսային դրանց ճշտման համար:
- 11.4. Նախնական ստուգումից, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում դրամական միջոցների ապադեպոնացման վերաբերյալ տվյալների ճշգրտումից հետո Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում Բորսայից ստացված տեղեկությունների հիման վրա դրամական միջոցների ապադեպոնացման առաջին փուլում՝ մինչև տվյալ օրվա ժամը 12<sup>15</sup>-ը, երկրորդ փուլում՝ մինչև ժամը 14 <sup>45</sup>-ը, իսկ երրորդ փուլում՝ մինչև ժամը 15<sup>20</sup>-ը պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում վճարման հանձնարարականները իր տարածքում գտնվող տերմինալից «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 100 կամ ՀՏ 202 հաղորդագրության միջոցով՝ դրամի դեպքում, և ՀՏ 203 հաղորդագրության միջոցով՝ արտարժույթի դեպքում :
- 11.5. ՀՀ կենտրոնական բանկում սույն կանոնակարգի 11.4. կետում նշված հանձնարարականներն ավտոմատ եղանակով կատարվում են, որի արդյունքում իրականացվում են դրանցում նշված միջոցների փոխանցումները ՀՀ կենտրոնական բանկում վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին՝ միաժամանակ վերջիններին

փոխանցելով հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները: Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին կատարվելիք փոխանցումների դեպքում ՀՀ կենտրոնական բանկն ապահովում է հանձնարարականում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային գործակալի՝ ՀՀ կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշիվներին՝ միաժամանակ Հաշվարկային գործակալին փոխանցելով հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունը: Հաշվարկային գործակալները ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատումների հիման վրա ապահովում են միջոցների մուտքագրումն իրենց մոտ վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին: Միջոցների մուտքագրման ժամկետները և Անդամներին տեղեկացման կարգը սահմանվում են Հաշվարկային գործակալի և Անդամի միջև կնքված պայմանագրով: ՀՀ կենտրոնական բանկը հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով առաքման անհնարինության դեպքում կամ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին» չմիացած և իր մոտ իրավասու հաշիվներ ունեցող Անդամներին սույն կետում նշված՝ հանձնարարականների կատարումը հաստատող փաստաթուղթը (տեղեկանք հաշվից) տրամադրում է թղթային եղանակով (անհրաժեշտության դեպքում նաև էլեկտրոնային կրիչով) համապատասխանաբար մինչև ժամը 12<sup>45</sup>, մինչև ժամը 15<sup>15</sup> և մինչև ժամը 15<sup>50</sup>-ը:

- 11.6.Սույն կանոնակարգի 14.7. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգի 11.1., 11.4. և 11.5. կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են մինչև 1 ժամով, որի մասին հեռախոսով, ՍիԲիԷլՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով Օպերատորը տեղեկացնում է ՀՀ Կենտրոնական Բանկին, Անդամներին՝ նշելով պատճառը:
- 11.7.Սույն կանոնակարգի 11.6. կետով սահմանված ժամանակահատվածում Բորսայի կողմից Օպերատորին տեղեկությունների տրամադրման անհնարինության դեպքում դրամական միջոցների ապադեպոնացումն իրականացվում է վերջնահաշվարկի իրականացման փուլում սույն կանոնակարգով սահմանված կարգով:
- 11.8.Սույն կանոնակարգի 11.4. կետին համապատասխան Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով հանձնարարականները մինչև 15:20-ը ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍիԲիԷլՆԵթ համակարգչային ցանցով այդ մասին տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին և Անդամներին՝ նշելով պատճառը, իսկ հանձնարարականների կատարումը իրականացվում է վերջնահաշվարկի փուլում, սույն կանոնակարգի «16. Վերջնահաշվարկե բաժնով սահմանված ընդհանուր կարգով:

## 12. Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման փուլերը

- 12.1 Օպերատորի կողմից քլիրինգի և վերջնահաշվարկի գործառույթը իրականացվում է հետևյալ փուլերով՝
  - 12.1.1.տեղեկությունների տրամադրում Բորսային առևտրային նստաշրջանից առաջ և առևտրային նստաշրջանի ընթացքում.
  - 12.1.2.առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների ապադեպոնացման և առևտրային նստաշրջանի ավարտից հետո կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունների ստացում Բորսայից.
  - 12.1.3.առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պարտավորությունների և պահանջների քլիրինգ.
  - 12.1.4. միջոցների համեմատում.
  - 12.1.5.առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկ.
  - 12.1.6.Անդամներին ռեեստրից քաղվածքների տրամադրում.

12.1.7. Անդամներին առաքված և ստացված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում:

### 13. Տեղեկությունների տրամադրում Բորսային

- 13.1. Օպերատորը առևտրային նստաշրջանի սկզբից առնվազն 15 րոպե առաջ տեղեկություն է տրամադրում Բորսային, որով տեղեկացնում է՝ Անդամների կողմից տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնելու նպատակով դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված միջոցների և առևտրային արգելադրման ենթարկված արժեթղթերի, ինչպես նաև յուրաքանչյուր Անդամի սեփական և անվանատիրոջ առևտրային ծածկագրերի, անձնական և իրավասու հաշիվների մասին:
- 13.2. Լրացուցիչ դեպոնացման առաջին փուլով Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում ոչ ուշ քան մինչև ժամը 11<sup>15</sup>-ը տեղեկություն է տրամադրում Բորսային, որով տեղեկացնում է՝ Անդամների կողմից տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնելու նպատակով դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված լրացուցիչ միջոցների և առևտրային արգելադրման ենթարկված լրացուցիչ արժեթղթերի մասին:
- 13.3. Լրացուցիչ դեպոնացման երկրորդ փուլով Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում ոչ ուշ քան մինչև ժամը 12<sup>45</sup>-ը տեղեկություն է տրամադրում Բորսային, որով տեղեկացնում է՝ Անդամների կողմից տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնելու նպատակով դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին փոխանցված լրացուցիչ միջոցների և առևտրային արգելադրման ենթարկված լրացուցիչ արժեթղթերի մասին:
- 13.4. Տեղեկությունները, դրանց տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Օպերատորի և Բորսայի միջև կնքված «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագրով:

### 14. Բորսայից տեղեկությունների ստացում

- 14.1. Բորսան առևտրային նստաշրջանի ավարտից ոչ ուշ քան 10 րոպե հետո տեղեկություններ է տրամադրում Օպերատորին, որով տեղեկացնում է տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առարկա արժեթղթերի քանակի և գնի մասին, դասակարգված ըստ գործարքների և Անդամների և նրանց հաճախորդների պատկանելիության:
- 14.2. Բորսան առևտրային նստաշրջանի ընթացքում ոչ ուշ քան մինչև ժամը 11<sup>45</sup>-ը տեղեկություններ է տրամադրում Օպերատորին Անդամի կողմից մինչև ժամը 11<sup>30</sup>-ը կատարված դրամական միջոցների՝ ապադեպոնացումների վերաբերյալ:
- 14.3. Բորսան առևտրային նստաշրջանի ընթացքում ոչ ուշ քան մինչև ժամը 14<sup>15</sup>-ը տեղեկություններ է տրամադրում Օպերատորին Անդամի կողմից ժամը 11<sup>30</sup>-ից մինչև ժամը 14<sup>00</sup>-ն կատարված դրամական միջոցների ապադեպոնացումների վերաբերյալ:
- 14.4. Բորսան առևտրային նստաշրջանի ավարտից ոչ ուշ քան մինչև ժամը 15<sup>05</sup>-ը տեղեկություններ է տրամադրում Օպերատորին Անդամի կողմից ժամը 14<sup>00</sup>-ից մինչև ժամը 15<sup>00</sup>-ն կատարված դրամական միջոցների ապադեպոնացումների վերաբերյալ:
- 14.5. Տեղեկությունները, դրանց դասակարգվածությունը, տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Օպերատորի և Բորսայի միջև կնքված «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագրով:
- 14.6. Տեղեկությունները հիմք են հանդիսանում Օպերատորի համար Անդամների և նրանց հաճախորդների դրամական միջոցների ապադեպոնացման, ինչպես նաև

գործարքների արդյունքում ծագած պարտավորությունների և պահանջների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար:

14.7. Եթե տեխնիկական վթարի կամ այլ պատճառով 14.1., 14.2., 14.3., 14.4. կետերով սահմանված ժամկետներում Բորսայի կողմից անհնար է տեղեկությունների տրամադրումը Օպերատորին, ապա Բորսան այդ մասին տեղեկացնում է Օպերատորին Օպերատորի և Բորսայի միջև կնքված «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագրով սահմանված կարգով:

## 15. Քլիրինգ

15.1. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո բորսայից ստացված առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա Օպերատորը իրականացնում է նախնական ստուգում՝ վերջնահաշվարկի համար անհրաժեշտ տվյալների համադրելիության և համապատասխանության ուղղությամբ

15.2. Եթե նախնական ստուգման արդյունքում բացահայտվում է անճշտություն, Օպերատորը Բորսայի հետ համատեղ անհապաղ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություն և դրա արդյունքներից կախված՝ ճշտումներ կատարում, կամ էլ դրանք վերադարձնում է Բորսային դրանց ճշտման համար:

15.3. Նախնական ստուգումից, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում գործարքների տվյալների ճշգրտումից հետո Օպերատորը իրականացնում է առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների զուտացում, որի արդյունքում ըստ յուրաքանչյուր Անդամի (նրա՝ որպես անվանատիրոջ) և նրա հաճախորդի Օպերատորը որոշում է իր հանդեպ.

15.3.1. մեկ զուտ դրամական պահանջը և/կամ զուտ դրամական պարտավորությունը.

15.3.2. յուրաքանչյուր արժեթղթի մասով մեկ զուտ արժեթղթերով պահանջը և/կամ զուտ արժեթղթային պարտավորությունը:

15.4. Դրամական միջոցներով զուտ պարտավորությունը ցույց է տալիս, թե Անդամի (Անդամի՝ որպես անվանատիրոջ) կամ նրա հաճախորդի կողմից դրամի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների որ մասն է կազմում պարտավորություն Օպերատորի նկատմամբ (դրամի կարճ դիրք), իսկ դրամական միջոցներով զուտ պահանջը՝ թե Անդամը (Անդամը՝ որպես անվանատեր) կամ նրա հաճախորդը դրամական միջոցների ինչ գումար պետք է ստանա Օպերատորից (դրամի երկար դիրք):

15.5. Արժեթղթերով զուտ պարտավորությունները ցույց են տալիս, թե Անդամը (Անդամը՝ որպես անվանատեր) կամ նրա հաճախորդը ինչ քանակի արժեթղթեր պետք է փոխանցի Օպերատորի տեխնիկական հաշվին (արժեթղթերի կարճ դիրք): Արժեթղթերով զուտ պահանջը ցույց է տալիս, թե Անդամը (Անդամը՝ որպես անվանատեր) կամ նրա հաճախորդը ինչ քանակի արժեթղթեր պետք է ստանա Օպերատորից (արժեթղթերի երկար դիրք):

## 16. Վերջնահաշվարկ

16.1. Դրամական միջոցների և արժեթղթերի համեմատումից անհամապատասխանության բացահայտման դեպքում Օպերատորը պարտավոր է մինչև վերջնահաշվարկի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանության պատճառները հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում այդ գործընթացին ներգրավելով նաև Բորսային:

- 16.2. Յուրաքանչյուր Անդամի (նրա՝ որպես անվանատիրոջ) և/կամ նրա հաճախորդի արժեթղթերով զուտ պահանջը և/կամ պարտավորությունները որոշելուց հետո Օպերատորը դադարեցնում է արժեթղթերի կարճ դիրք ունեցող Անդամների և նրանց հաճախորդների անձնական հաշիվներում արգելադրված և փոխանցման ենթակա արժեթղթերի արգելադրումը՝ միաժամանակ դրանք փոխանցելով տեխնիկական հաշվի վրա:
- 16.3. Սույն կանոնակարգի 15.3.1 ենթակետում նշված տվյալների հիման վրա Օպերատորը հաշվարկում է Անդամների սեփական (անվանատիրոջ) և ամփոփ հաճախորդների դրամի և/կամ արտարժույթի իրավասու հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամական միջոցները, իրականացնում է կատարված հաշվարկների ստուգում և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացում և դրամական վերջնահաշվարկների իրականացման համար համապատասխան հանձնարարականների պատրաստում:
- 16.4. Օպերատորը մինչև տվյալ օրվա ժամը 15.30-ն ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում վճարման հանձնարարականները իր տարածքում գտնվող տերմինալից «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 100 կամ ՀՏ 202 հաղորդագրության միջոցով՝ դրամի դեպքում, և ՀՏ203 հաղորդագրության միջոցով՝ արտարժույթի դեպքում: Օպերատորը միաժամանակ իրականացնում է տեխնիկական հաշվից արժեթղթերի փոխանցումը արժեթղթերի երկար դիրք ունեցող Անդամների (նրանց՝ որպես անվանատերերի) և/կամ նրանց հաճախորդների անձնական հաշիվների վրա:
- 16.5. ՀՀ կենտրոնական բանկում սույն կանոնակարգի 16.4. կետում նշված հանձնարարականներն ավտոմատ եղանակով կատարվում են, որի արդյունքում իրականացվում են դրանցում նշված միջոցների փոխանցումները ՀՀ կենտրոնական բանկում վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին՝ միաժամանակ վերջիններիս փոխանցելով հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները: Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին կատարվելիք փոխանցումների դեպքում ՀՀ կենտրոնական բանկն ապահովում է հանձնարարականում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային գործակալի՝ ՀՀ կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշիվներին՝ միաժամանակ Հաշվարկային գործակալին փոխանցելով հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունը: Հաշվարկային գործակալները ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատումների հիման վրա ապահովում են միջոցների մուտքագրումն իրենց մոտ վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին: Միջոցների մուտքագրման ժամկետները և Անդամներին տեղեկացման կարգը սահմանվում են Հաշվարկային գործակալի և Անդամի միջև կնքված պայմանագրով: ՀՀ կենտրոնական բանկը հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով առաքման անհնարինության դեպքում կամ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին» չմիացած և իր մոտ իրավասու հաշիվներ ունեցող Անդամներին սույն կետում նշված՝ հանձնարարականների կատարումը հաստատող փաստաթուղթը (տեղեկանք հաշվից) տրամադրում է թղթային եղանակով(անհրաժեշտության դեպքում նաև էլեկտրոնային կրիչով) մինչև ժամը 16<sup>00</sup>-ն:
- 16.6. ՀՀ կենտրոնական բանկում իրավասու հաշիվներ ունեցող Անդամներն ստուգում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված դրամական միջոցների համապատասխանությունը Բորսայից

ստացված գործարքների գրանցման վկայականների և Օպերատորից ստացած հաշվետվության (Ձև M502) տվյալների հետ: Հաշվարկային գործակալի մոտ իրավասու հաշիվներ ունեցող Անդամները Հաշվարկային գործակալի հետ ճշտում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված (փոխանցվելիք, հաշվեգրման ենթակա) դրամական միջոցների համապատասխանությունը Բորսայից ստացված գործարքների գրանցման վկայականների և Օպերատորից ստացած հաշվետվության (Ձև M502) տվյալների հետ:

- 16.7. Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Անդամը մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16<sup>30</sup>-ը այդ մասին հեռախոսով հայտնում է համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ, ՀՀ կենտրոնական բանկին և Օպերատորին: Հնարավորության դեպքում ՀՀ կենտրոնական բանկին տեղեկացումն ուղարկվում է նաև էլեկտրոնային եղանակով՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով:
- 16.8. Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ Անդամի կողմից անհամապատասխանության վերաբերյալ արված ահազանգն անհիմն է, ապա Օպերատորը մինչև ժամը 17<sup>00</sup>-ն այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին և համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում էր ահազանգը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ:
- 16.9. Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգը հիմնավոր է կամ առկա է կասկած, որ այն կարող է լինել հիմնավոր, ապա Օպերատորը մինչև ժամը 17<sup>00</sup>-ն հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով այդ մասին տեղեկացնում է համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է (կարող է վերաբերվել) անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ: Միաժամանակ Օպերատորը այդ մասին տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը:
- 16.10. Անդամները, որոնց իրավասու հաշիվները վարվում են ՀՀ կենտրոնական բանկում և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել դրամային և/կամ արտաժողային միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ քան մինչև ժամը 18<sup>00</sup>-ն Օպերատորի դրամի և/կամ արտաժողային առևտրային հաշվին հետ փոխանցել ավել ստացված միջոցները: Անդամները, որոնց իրավասու հաշիվները վարվում են Հաշվարկային գործակալի մոտ և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել դրամային և/կամ արտաժողային միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո անմիջապես կարգադրել իրենց սպասարկող Հաշվարկային գործակալին ոչ ուշ քան մինչև ժամը 18<sup>00</sup>-ն Օպերատորի դրամի և/կամ արտաժողային առևտրային հաշվին հետ փոխանցելու ավել ստացված միջոցները:

- 16.11. Օպերատորը ոչ ուշ, քան տվյալ առևտրային օրվա ժամը 18<sup>30</sup>-ը, պարտավոր է համապատասխան հանձնարարականներ ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգի 16.10 կետին համապատասխան ստացված միջոցներն Անդամների իրավասու հաշիվներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:
- 16.12. Սույն կանոնակարգի 16.10., 16.11. և 16.19. կետերին համապատասխան Անդամների, Հաշվարկային գործակալների և Օպերատորի կողմից համապատասխան հանձնարարականները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային եղանակով:
- 16.13. Սույն կանոնակարգի 16.4. կետին համապատասխան Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով դիմում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը: Միաժամանակ մինչև ժամը 16<sup>00</sup>-ն էլեկտրոնային եղանակով հանձնարարականները Օպերատորի կողմից ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Անդամներին և նշելով պատճառը:
- 16.14. Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում դրանք մինչև ժամը 16<sup>30</sup>-ը Օպերատորի կողմից ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Անդամներին և ՀՀ կենտրոնական բանկին և նշելով պատճառը:
- 16.15. Սույն կանոնակարգի 16.13. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգի 16.5, 16.7, 16.8, 16.9, 16.10 և 16.11. կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են 30 րոպեով:
- 16.16. Սույն կանոնակարգի 16.14. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգի 16.5, 16.7, 16.8, 16.9, 16.10 և 16.11. կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են 1 ժամով:
- 16.17. Սույն կանոնակարգի 14.7. կետով սահմանված դեպքում Օպերատորը Բորսայի կողմից տեղեկանալուց հետո հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով դիմում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը 1 ժամով, որի մասին հեռախոսով, ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով Օպերատորը տեղեկացնում է Անդամներին՝ նշելով պարճառը :
- 16.18. Բորսայի կողմից մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16<sup>30</sup>-ը Օպերատորին սույն կանոնակարգի 14.1. կետով սահմանված տեղեկությունների տրամադրման անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով դիմում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը մինչև ժամը 18<sup>00</sup>-ն, որի մասին հեռախոսով, ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով Օպերատորը տեղեկացնում է Անդամներին՝ նշելով պարճառը :
- 16.19. Եթե Բորսան մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 17<sup>30</sup>-ը Օպերատորին չի ներկայացնում վերջնահաշվարկի համար անհրաժեշտ տեղեկությունները, ապա Օպերատորը պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում հանձնարարականներ Անդամների իրավասու հաշիվներից ստացված

միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով, իսկ արժեթղթերի վերաբերյալ Օպերատորը որևէ փոփոխություն չի գրանցում և տվյալ առևտրային նստաշրջանի համար առևտրային արգելադրման ենթարկված արժեթղթերը մնում են անփոփոխ:

**17. Անդամներին ռեեստրից քաղվածքների և առաքված և ստացված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում**

- 17.1. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում Օպերատորը տվյալ առևտրային նստաշրջանին մասնակցած Անդամին տրամադրում է ռեեստրից քաղվածք:
- 17.2. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում Օպերատորը տվյալ առևտրային նստաշրջանին մասնակցած Անդամին տրամադրում է հաշվետվություն նրա կողմից ստացված և/կամ վճարված դրամական միջոցների վերաբերյալ՝ Ձև M 502:
- 17.3. Բորսայում կնքված գործարքների արդյունքում առևտրի մասնակցի դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունը՝ Ձև M 502, որը սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 5-ում, ներառում է հետևյալ տեղեկությունները.
- 17.3.1. Անդամի անվանումը,
  - 17.3.2. հաշվետու ժամանակաշրջանը,
  - 17.3.3. դրամական միջոցների պատկանելիությունը (հաճախորդների, անվանատիրոջ կամ սեփական),
  - 17.3.4. Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և իրավասու հաշվի համարը,
  - 17.3.5. արժույթը
  - 17.3.6. գումարը առևտրային նստաշրջանի սկզբում,
  - 17.3.7. լրացուցիչ դեպոնացված դրամական միջոցների գումարը առևտրային նստաշրջանի ընթացքում
  - 17.3.8. ապադեպոնացված դրամական միջոցների գումարը առևտրային նստաշրջանի ընթացքում
  - 17.3.9. մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում,
  - 17.3.10. վճարման կամ ստացման ենթակա գումարը,
  - 17.3.11. հաշվետվության վավերացման ամսաթիվը (թղթային տարբերակը ներկայացնելու դեպքում),
  - 17.3.12. Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությունը և կնիքը (թղթային տարբերակը տրամադրելու դեպքում):

**17'. Բորսայի տեղաբաշխման համակարգի միջոցով արժեթղթերի տեղաբաշխման կանոնները.**

17'.1. Անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններե-ով սահմանված կարգով իր կողմից թողարկված արժեթղթերը տեղաբաշխելու նպատակով Օպերատորին է ներկայացնում համապատասխան դիմում և սույն կանոնակարգի Հավելված 7-ով սահմանված լրացված Ձև P 101, երկու օրինակից: Անդամը Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններե-ով սահմանված կարգով թողարկողի կողմից թողարկված արժեթղթերը տեղաբաշխելու նպատակով Օպերատորին է ներկայացնում համապատասխան դիմում և հավաստիացում (արժեթղթերի տեղաբաշխողի մասին համապատասխան պայմանագիր) այն մասին, որ հանդիսանում է տվյալ արժեթղթերի տեղաբաշխողը:

Սույն կետորով սահմանված դիմումատուն պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված տեղեկությունների ճշգրտության համար:

17'.2. Սույն կանոնակարգի 17'.1. կետում նշված՝ Անդամ չհանդիսացող ներդրումային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության դիմումի բավարարման դեպքում Օպերատորը դիմումը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին շնորհում է 2 նիշանոց առևտրային ծածկագրի նախադիր, տեղաբաշխման ենթակա արժեթղթերին՝ 12 նիշանոց նույնականացնող համար, որը համապատասխան գրությամբ, սույն կանոնակարգի 17'.4 և 17'.5 կետերով սահմանված հանձնարարագրերի պաշտպանված տարբերակների և Օպերատորի կողմից ստորագրված և կնքված Ձև P 101-ի օրինակներից մեկի հետ մեկտեղ տրամադրում է դիմումատուին: Ընդ որում, նոր դասի/տեսակի արժեթղթերի տեղաբաշխման համար դիմումատուն պետք է ներկայացնի նոր Ձև P 101, երկու օրինակից, որը լրացվում, ստորագրվում և կնքվում է, ինչպես նաև տրամադրվում է արժեթղթերի նույնականացման համար սույն կանոնակարգով սահմանված կարգով: Սույն կանոնակարգի 17'.1. կետում նշված՝ Անդամի դիմումի բավարարման դեպքում Օպերատորը դիմումը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում Անդամին տրամադրում է 17'.4 և 17'.5 կետերով սահմանված հանձնարարագրերի պաշտպանված տարբերակները, տեղաբաշխման ենթակա արժեթղթերին՝ 12 նիշանոց նույնականացնող համար:

17'.3. Սույն կանոնակարգի 17'.1. կետում նշված դիմումը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ անհամապատասխանություն՝ այդ մասին գրավոր ծանուցելով դիմումատուին: 17'.4. Բորսայի տեղաբաշխման համակարգով արժեթղթերի տեղաբաշխման նպատակով Անդամը (Անդամի՝ որպես տվյալ արժեթղթերի տեղաբաշխողի մասին պետք է հավաստիանա Օպերատորը), ինչպես նաև սույն կանոնակարգի 17'.1. կետով սահմանված դիմումատուն ներկայացնում են սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված լրացված Ձև P402՝ առևտրային արգելադրման հանձնարարագիր: Եթե արժեթղթերը, Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու նպատակով, հաշվառվում են Անդամի՝ արժեթղթերի անվանատիրոջ անձնական հաշվում, ապա արժեթղթերի արգելադրման (արգելադրման դադարեցման) համար Օպերատորին են ներկայացվում սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված հանձնարարագրերը:

17'.5. Բորսայի տեղաբաշխման հարթակում արժեթղթերի տեղաբաշխումից հետո թողարկման հաշվում արգելադրված արժեթղթերի առկայության դեպքում դիմումատուն, իսկ այն դեպքում, երբ Անդամը հանդիսանում է թողարկողի արժեթղթերի՝ Բորսայի տեղաբաշխման համակարգի միջոցով տեղաբաշխող (ինչի մասին պետք է հավաստիանա Օպերատորը), Անդամը, կարող են ներկայացնել սույն կանոնակարգի Հավելված 9-ով սահմանված լրացված Ձև P403՝ առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիր:

17'.6. Սույն կանոնակարգի 17'.4. և 17'.5. կետերով սահմանված հանձնարարագրերը Օպերատորին ներկայացվում և Օպերատորի կողմից մշակվում են սույն կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում:

17'.7. Դրամական միջոցների դեպոնացումը, ապադեպոնացումը, քլիրինգը և վերջնահաշվարկը կատարվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում:

## 18. Պատասխանատվությունը

- 18.1. Օպերատորը ՀՀ օրենսդրությամբ, իր կանոնակարգերով, իր և Անդամների, միջև կնքված և գործող պայմանագրերով սահմանված դեպքերում, կարգով և չափով պատասխանատվություն է կրում Համակարգի սպասարկման հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 18.2. Եթե Անդամը սույն կանոնակարգի 16.10. կետում նշված ժամկետում չի ապահովում ավել փոխանցված դրամական միջոցների փոխանցումը Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին, ապա նա կրում է պատասխանատվություն իր պարտավորության չկատարման հետևանքով առաջացած բոլոր վնասների փոխհատուցման համար:

## 19. Անցումային դրույթներ

Սույն կանոնները նոր խմբագրությամբ ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրը՝ սույն կանոնների նոր խմբագրությամբ նախատեսված փոփոխությունների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո:

Անդամի անվանումը	
Անդամի հասցեն	
Անդամի հեռախոսը, ֆաքսը	
Անդամի իրավասու էլեկտրոնային հասցեն	
Օպերատորի մոտ Անդամի անձնական հաշվի համարը	
Օպերատորի մոտ Անդամի՝ անվանատիրոջ անձնական հաշվի համար (առկայության դեպքում)	
Անդամի կողմից բորսայում առևտրին մասնակցելու համար լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն, պաշտոնը և ստորագրությունը	

**Իրավասու հաշիվներ**

Հաշվարկային գործակալի/Անդամի՝ անվանումը և վերջինիս մոտ Անդամի սեփական դրամական միջոցների հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի կողմից հաճախորդների դրամական միջոցների համար բացված հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի՝ անվանատիրոջ դրամական միջոցների համար բացված հաշվի համարը (եթե այն տարբեր է հաճախորդների դրամական միջոցների համար բացված հաշվի համարից)	

**Լրացման ամսաթիվը** « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 201 թ.

*Անդամի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն և պաշտոնը*

*ստորագրությունը*

**Կ.Տ.**

**Լրացվում է Օպերատորի կողմից**

Առևտրային ծածկագրի նախադիր՝ 2 նիշից (շնորհվում է Օպերատորի կողմից)	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Անդամի բորսայական հապավում՝ 5 նիշից (շնորհվում է Բորսայի կողմից)	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

**Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն**

**ստորագրությունը**

**Կ.Տ.**

Հավելված 2

**Ձև B 402 / Առևտրային արգելադրման հանձնարարագիր**

<sup>1</sup> Եթե Անդամը հանդիսանում է առևտրային բանկ, ապա նշվում է Անդամի անվանումը

**Անդամի անվանումը**

Արժեթղթերի արգելադրման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի առևտրային ծածկագրի նախադիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Արժեթղթերի քանակը	Թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

**Օպերատորի նշումները  
(փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)**

Ընդունման ամսաթիվը

Ստորագրությունը

Գրանցման ամսաթիվը

Ստորագրությունը

Կատարված է

Մերժված է

Պատճառը՝

Գործողություններ՝

Կատարման ամսաթիվը

Ստորագրությունը

Հավելված 3

**Ձև B 403 / Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիր**

**Անդամի անվանումը**

Արժեթղթերի արգելադրման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի առևտրային ծածկագրի նախադիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Արժեթղթերի քանակը	Թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Օպերատորի նշումները  
(փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)

Ընդունման ամսաթիվը  
 Գրանցման ամսաթիվը  
 Կատարված է  Մերժված է  
 Կատարման ամսաթիվը

Կ.Տ.

Ստորագրությունը

Ստորագրությունը

Պատճառը՝

Գործողություններ՝

Ստորագրությունը

Հավելված 4

**Ձև M 501 / Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կողմից ներկայացվող հաշվետվություն այն դրամական միջոցների բաշխման մասին, որոնք փոխանցվել են դրամի առևտրային հաշվին**

**Անդամի անվանումը**

Դրամական միջոցների բաշխումը առ՝ (օր/ամիս/տարի)	
--	--

Անդամի բորսայական հապավումը	
Անդամի առևտրային ծածկագրի նախադիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Դրամական միջոցների գումարը
	0	
Ընդամենը Անդամի սեփական գործարքների համար		0.00
Ընդամենը Անվանատիրոջ գործարքների համար		0.00
Ընդամենը հաճախորդների գործարքների համար		0.00
Ընդամենը բոլոր գործարքների համար		0.00

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Օպերատորի նշումները  
(փաստաթղթային տարբերակի  
ներկայացման դեպքում)

Ընդունման ամսաթիվը

Ստորագրությունը

Գրանցման ամսաթիվը

Ստորագրությունը

Կատարված է

Մերժված է

Պատճառը՝

Գործողություններ՝

Ստորագրությունը

Կատարման ամսաթիվը

**Ձև M 502 / ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Բորսայում կնքված գործարքների արդյունքում առևտրի մասնակցի դրամական միջոցների վերաբերյալ

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

Հաշվետու ժամանակաշրջան « » ....., 20.. թ.

(Անդամի անվանումը)

Դրամական միջոցների պատկանելիությանը	Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը	Իրավասու հաշվի համարը	Արժույթը	Գումարը առևտրային նստաշրջանի սկզբում	Լրացուցիչ դեպոզիտացված դրամական միջոցների գումարը առևտրային նստաշրջանի ընթացքում	Ապադեպոզիտացված դրամական միջոցների գումարը առևտրային նստաշրջանի ընթացքում	Մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում	Վճարման (-) կամ ստացման (+) ենթակա գումարը

Գործադիր մարմնի ղեկավար / \_\_\_\_\_ /  
 (Ա.Հ.Ա.) (ստորագրություն) Կ.Տ.  
 ..../..../...(օր/ամիս/տարի)

**Հաշվետվություն  
ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների մասին**

Ստուգման ժամանակահատվածը .(օր/ամիս/տարի)

----- մինչև -----

Ստուգման իրականացման ժամանակահատվածը. (օր/ամիս/տարի)

----- մինչև -----

Ստուգման մասնակցած ներքին աուդիտի անդամները.. (ԱԱ)

1. -----
2. -----
3. -----
4. -----

**Ստուգման արդյունքում.**

1. Անդամի կողմից ծառայությունները մատուցվել են բացա-

ռապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով

այո

ոչ

կնքված գրավոր պայմանագրի հիման վրա.

(

(

Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,-----

-----  
-----  
-----

2. Անդամը իր հաճախորդին տեղեկացրել է ներդրողների պաշտ-

պանության գործող մեխանիզմների մասին

այո

ոչ

Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,-----

-----  
-----  
-----

3. Անդամը վարում է առանձնացված հաշվառում յուրա-

քանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների  
այն ոչ  
միջոցների համար. ( )  
( )

Եթե առկա են խախտում(ներ), ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,-----  
-----  
-----

4. Անդամի մոտ «Բանկերի, վարկային կազմակերպու-  
թյունների, ներդրումային ընկերությունների և ապահովա-  
գրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի  
առկա են առկա չեն  
հոդված 2-ի առաջին կետով սահմանված անվճարունակության  
( ) ( )  
հիմքեր

Եթե առկա են, ապա նշել հիմքերը, դրանց վերացման ուղղությամբ տարվող  
միջոցառումները-----  
-----  
-----

5. Ներքին աուդիտի կողմից նախորդ ստուգման արդյունքում սույն  
հաշվետվությամբ նշված խախտման (խախտումների առկայության դեպքում)  
վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների նկարագրությունը և  
խախտման վերացման կամ դրա նվազեցման փաստի առկայությունը.

-----  
-----  
-----

« \_\_\_\_\_ »  
(Անդամի անվանումը)  
Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար  
/ \_\_\_\_\_ /  
(Ա.Հ.Ա.)  
(ստորագրություն)  
(օր/ամիս/տարի)

**Լրացվում է դիմումատուի կողմից**

Անվանումը	
Փոստային հասցե	
Հեռախոսը, ֆաքսը	
Իրավասու էլեկտրոնային հասցեն	
Օպերատորի մոտ բացված թողարկման հաշվի համարը	
Լիազորված անձի անուն, ազգանուն	
Հաշվարկային գործակալի անվանումը և վերջինիս մոտ դրամի հաշվի համարը (իրավասու հաշիվը)	

**Գործադիր մարմնի անուն, ազգանուն և պաշտոն**

**ստորագրությունը**

Կ.Տ.

**Լրացվում է Օպերատորի կողմից**

Առևտրային ծածկագրի նախադիր՝ 2 նիշից (շնորհվում է Օպերատորի կողմից)							
Անդամի բորսայական հապավում՝ 5 նիշից (շնորհվում է Բորսայի կողմից)							

**Գործադիր մարմնի անուն, ազգանուն և պաշտոն**

**ստորագրությունը**

Կ.Տ.

Հավելված 8.

**Ձև P402 / Առևտրային արգելադրման հանձնարարագիր**

**Անվանումը**

Արժեթղթերի արգելադրման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Բորսայական հապավումը	
Ծածկագրի նախդիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Թողարկման հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Արժեթղթերի քանակը	Արժեթղթերի նույնականացման համարը (12 նիշ)

Լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Օպերատորի նշումները (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)

Ընդունման ամսաթիվը	Ստորագրությունը
Գրանցման ամսաթիվը	Ստորագրությունը
" Կատարված է " Մերժված է	Պատճառը՝
	Գործողություններ՝
Կատարման ամսաթիվը	Ստորագրությունը

Հավելված 9.

**Ձև P 403 / Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիր**

**Անվանումը**

Արժեթղթերի արգելադրման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Բորսայական հապավումը	
Ծածկագրի նախդիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Թողարկման հաշվի համարը	Արժեթղթերի քանակը	Արժեթղթերի նույնականացման համարը (12 նիշ)

Լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

**Օպերատորի նշումները (փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)**

Ընդունման ամսաթիվը  
 Գրանցման ամսաթիվը  
 " Կատարված է " Մերժված է  
 Կատարման ամսաթիվը

Կ.Տ.  
 Ստորագրությունը  
 Ստորագրությունը  
 Պատճառը՝  
 Գործողություններ՝  
 Ստորագրությունը

Հավելված 10.

R 101FX

**Լրացվում է Անդամի կողմից**

Անդամի անվանումը	
Անդամի հասցեն	
Անդամի հեռախոսը, ֆաքսը	
Անդամի իրավասու էլեկտրոնային հասցեն	
Օպերատորի մոտ Անդամի անձնական հաշվի համարը	
Օպերատորի մոտ Անդամի՝ անվանատիրոջ անձնական հաշվի համար (առկայության դեպքում)	
Անդամի կողմից բորսայում առևտրին մասնակցելու համար լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն, պաշտոնը և ստորագրությունը	

**Իրավասու հաշիվներ**

Հաշվարկային գործակալի/Անդամի <sup>2</sup> անվանումը և վերջինիս մոտ Անդամի սեփական արտարժույթային միջոցների հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի կողմից հաճախորդների արտարժույթային միջոցների համար բացված հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի՝ անվանատիրոջ արտարժույթային միջոցների համար բացված հաշվի համարը (եթե այն տարբեր է հաճախորդների արտարժույթային միջոցների համար բացված հաշվի համարից)	

**Լրացման ամսաթիվը** « \_\_\_\_\_ է \_\_\_\_\_ 200 թ.

Անդամի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

**Լրացվում է Օպերատորի կողմից**

Առևտրային ծածկագրի նախադիր՝ 2 նիշից (շնորհվում է Օպերատորի կողմից)							
Անդամի բորսայական հապավում՝ 5 նիշից (շնորհվում է Բորսայի կողմից)							

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն ստորագրությունը Կ.Տ.

<sup>2</sup> Եթե Անդամը հանդիսանում է առևտրային բանկ, ապա նշվում է Անդամի անվանումը

Հավելված 11.

**Ձև M 501FX**

Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կողմից ներկայացվող հաշվետվություն այն դրամական միջոցների բաշխման մասին, որոնք փոխանցվել են Օպերատորի դրամի և/կամ արտարժույթի առևտրային հաշվին

**Անդամի անվանումը**

Դրամական միջոցների բաշխումը առ՝ (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի առևտրային ծածկագրի նախադիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Արժույթը	Դրամական միջոցների գումարը
	0		
Ընդամենը ՀՀ դրամ Անդամի սեփական գործարքների համար		AMD	0.00
Ընդամենը արտարժույթ Անդամի սեփական գործարքների համար			0.00
Ընդամենը ՀՀ դրամ Անվանատիրոջ գործարքների համար		AMD	0.00
Ընդամենը տվյալ արտարժույթից Անվանատիրոջ գործարքների համար			0.00
Ընդամենը ՀՀ դրամ հաճախորդների գործարքների համար		AMD	0.00
Ընդամենը տվյալ արտարժույթից հաճախորդների գործարքների համար			0.00
Ընդամենը ՀՀ դրամ բոլոր գործարքների համար		AMD	0.00
Ընդամենը տվյալ արտարժույթից բոլոր գործարքների համար			0.00

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Օպերատորի նշումները  
(փաստաթղթային տարբերակի ներկայացման  
դեպքում)

Ընդունման  
ամսաթիվը

Ստորագրությունը

Գրանցման  
ամսաթիվը

Ստորագրությունը

"  
Կատարված է

" Մերժված է  
Պատճառը՝

Գործողություններ՝

Կատարման  
ամսաթիվը

Ստորագրությունը

է: